ծաղկած մի ավետարան[83], մի այլ ավետարան՝ 1205 թվից գտնվում է սուրբ Ղազարի Մխիթարյան Մատենադարանում[84], և մի ձեռագրի նկարագրություն՝ Թորգոմ Գուշակյանի Սեբաստիայի ս. Նշան վանքի ձեռագրերի ցուցակում[85]։ Այս վերջին ձեռագիրը գրված է «հաւանաբար ԺԲ դարու վերջ»[86], և ստացողն է Վարդան կրոնավորը «ես նուաստ քահանայ և կրաւնաւորս Վարդան զփափագումն սրտի իմոյ և զյիշատակ հոգւոյ իմոյ ետու գրել զսուրբ Աւետարանս իմով աշխատութեամբ և արդեամբք, ծաղկի նկարով և ոսկւով զարդարեալ, ի յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւղաց իմոց, հաւր իմոյ Դաւթի և մաւր իմոյ՝ Թագուհիի...»[87]։ Այստեղ հիշվում են հորեղբայր Գրիգորը և որդին՝ Պողոս պատանյակը։ Արդյոք սույն Վարդան կրոնավորը մեր գրիչ Վարդան Կարնեցին չէ՞ և Կոզմա գրչի սույն օրինակից չէ, որ 1200 թվականին ինքը, իսկ 1201 թվականին Ստեփանոսը ընդօրինակեցին մեկական ավետարան Սարգսի և Ստեփանոսի համար։ Արդյոք օրինակ տալու համար չէ՞, որ Ստեփանոս գրիչը հիշում է «զընտրեալ քահանայն Վարդան... զի բազում իրաւք աւգնական եղեւ մեզ»[88]։ Հետագայում նրա անվանը չենք հանդիպում Ավագ վանքում, որտեղից հաջորդ ձեռագիրը՝ 1227-թվականին է պատկանում։ Արդյոք 1202 թ. Ռուբն-էդ-դինի հրոսակներից սպանվեց ոսկեծղի գրագիրը, թե՞ մահացավ բնական մահով։ Ավագ վանքի գրչության դպրոցը շարունակեց իր գոյությունը և ծաղկման հասավ հատկապես ԺԵ դարում, իր դպրոցով ու վարդապետներով[89], որի մասին մի ուրիշ անգամ։

Թ

Իսկ ո՞վ է Մշո Առաքելոց վանքում Տօնականը կազմել և հիշատակարանը գրել։ Կազմողը և գրիչը իր անունը չի տալիս։ Նա հիշատակարանում հիշվածներից որևէ մեկը չէ, բայց հիշատակարանում երևում է ոչ միայն որպես գրիչ, այլև որպես ձեռագրի փրկությանը գործուն մասնակից. «նոյն եւ մեք առեալ զրսա՝ դարձաք երկնագումար եղբայրանոցս մեր»,—գրում է ձեռագիրը Առաքելոց վանք բերելու առթիվ, իսկ վերջում՝ «սկսա կազմել», ապա՝ «զկազմող զեղկելիս և զեղբայրիկ իմ զրՍտեփանոսն յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր»։

Հիշատակարանը ամբողջական մի պատմություն է, անշուշտ խմբագրված Եսայի եպիսկոպոսի կողմից։ Դրիչը, որ աշխատել է հիշատակարանի գրությունը նմանեցնել ձեռագրի գրության ոճին, գրչության արվեստի վարպետ է երևում։ Այդ ժամանակ Առաքելոց ուխտի միաբաններին մեջ կար մի նշանավոր վարդապետ, որի անունը չի հիշվում հիշատակարանում, այդ անձը Թեոդորոս վարժապետն էր։ Ներսես Լամբրոնացին Տուտեորդու Թղթի պատասխանում, իր տեսակետը պաշտպանողների շարքում, թվում է նաև «բոլոր գաւառն Տարօնոյ և որ ի նմա իմաստուն եպիսկոպոսն Եսայի և վարժապետ Թէոդորոս»[90]։ Եսայի

83 Մատենադարան, ձեռ. № 7734։

84 Հայկական մանրանկարչության Մխիթարեան մատենադարանի ձեռագրաց, Ա, Վենետիկ, 1967, էջ 51։

85 Թ. Գուշակյան, Ցուցակ, էջ 25։

86 Յիշատակարանք Ա, էջ 667։

87 Անդ։

88 Մատենադարան, ձեռ. № 308ա։

89 Հ. Ոսկյան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 1—25։

90 Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, Մատենադարանի Մխիթարեանց, ի Վիեննա 1895 թ., էջ 334։